ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

5 - 7 Օգոստոս 2011 թուականներուն Պեռլինէն ոչ շատ հեռու Քրէօթցէլ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Կոմիտաս Վարդապետի նուիրուած միջազգային փառատօն մը, հովանաւորութեամբ փրոֆ. Զաւէն եւ Արամ Եկաւեանների: Փառատօնի բացման արարողութեան ներկայ գտնուեցաւ եւ ողջոյնի խօսք ուղղեց Գերմանիոյ Հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պէքճեանը, իր հետն ունենալով շրջանի հոգեւոր հովիւ Տ. Գնել քհնյ. Գաբրիէլեանը եւ Հայաստանէն Գեղարդ երգչախումբի հետ միասին ժամանած վանահայր Հոգշ. Տ. Յարութիւն աբեղայ Կիրակոսեանը:

Փառատօնին Հայաստանէն որպէս հիւր մասնակցելու եկած էին հանրաճանաչ երաժիշտ փրոֆ. Ռոպերթ Ամիրխանեան, մէցցօսոբրան Աննա Մայիլեան, դաշնակահարուհի փրոֆ. Մարինէ Աբրահամեան եւ ջութակահար Նիքոլայ Մատոյեան: Հայաստանէն հրաւիրուած էր Գեղարդավանքի երգչախումբը: Ելոյթ ունեցան նաեւ Լեհաստանէն ժամանած ֆիլարմոնիք նուագախումբը եւ այլ օտար երաժիշտներ:

7 Օգոստոս 2011, կիրակի առաւօտ Ս. Պատարագ մատուցուեցաւ ձեռամբ շրջանի հոգեւոր հովիւ Տ. Գնել քհնյ. Գաբրիէլեանի, որ նաեւ տուաւ օրուան պատգամը: Երգեցողութիւնները կատարուեցան Գեղարդի վանքի երգչախումբի կողմէ:

Քրէօթցէլի պատմական դղեակը, որ այժմ կալուածն է պրն. Վահրամ Եկաւեանի, կը գտնուի հսկայ հողատարածքի մը վրայ, ուր տեղի ունեցան փառատօնն ու Ս. Պատարագը:

ԴԻՒԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԿՐՏՎԵՑ 50 ՀՈԳԻ

Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի օրհնությամբ Հայաստանի Մանուկների հիմնադրամի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ, ինչպես նաեւ աջակցությամբ Քարակերտի համայնքապետի, համայնքապետարանի ընկերային բաժնի պատասխանատուի, ս/թ օգոստոսի 7-ին Քարակերտի համայնքային կենտրոնում տեղի ունեցավ 5 ամսականից մինչեւ 53 տարեկան անձանց մկրտության արարողություն:

Մինչեւ մկրտությունը Քարակերտում Մայր Աթոռի կողմից կիրակնօրյա ծառայությունների կոչված Տ. Արարատ քհն. Պողոսյանի հետ, թե՛ մկրտվողները եւ թե՛ կնքահայրերը Քարակերտի հոգեւոր մշակութային կենտրոնում հանդիպումներ են ունեցել: Այդ հանդիպումների արդյունքում համայնքի բնակիչները խորապես ընկալել էին, որ մկրտության համար կարեւոր առաջին պայմանը ճշմարիտ հավատքն է եւ յուրաքանչյուր ոք մկրտություն ստանալուց մաքրվում է Ադամական մեղքից եւ որդեգրվում Հայր Աստծուն ու դառնում Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու անդամ:

Աստծո կամքով Հայաստանի Մանուկների հիմնադրամի այս գեղեցիկ նախաձեռնությունը շարունակական կդառնա, քանի որ այդ օրվա խորհուրդով չափազանց տպավորված էին համայնքի շատ ու շատ բնակիչներ, որոնք մշտապես քահանայի հետ հանդիպումներ ունենալով իրապես հասկացել են Ավետարանի խոսքը՝ «Ով հավատա եւ մկրտվի, պիտի փրկվի» (Մրկ. ԺՋ 16):

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Յուլիս ամսու վերջերը, հայաստանեան «Հրապարակ» կայքէջի վրայ լոյս տեսած «Ֆրանսահայերը յաղթում են» գրութեան պատճառով, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի թեմը պարտաւորուած կը զգայ հերքել իրականութեանը չհամապատասխանող այդ լուրը:

Ճիշդ չէ այն տեղեկատուութիւնը, ըստ որուն ֆրանսական Դատարանը իրաւունք տուած ըլլայ Նիսի ծուխի վարչականներուն, Ֆրանսայի Հայոց թեմի հետ իրենց ունեցած հակառակութեան եւ տարակարծութեան հարցին մէջ: Ոչ մէկ վճիռ կամ որոշում այդ ուղղութեամբ չէ կայացած: Դատական գործընթացը կը շարունակուի, ինչպէս «Հրապարակ»-ը ինքն ալ կը շեշտէ իր տեղեկատուութեան վերջին տողով, թէ 23 սեպտեմբերին կայանալու է դատը: Այսպեղ արդարեւ հակասութիւն կայ լրատուութեան մէջ: Այլապէս ինչո՞ւ դատական գործընթացը պիտի շարունակուէր, եթէ դատարանը արդէն վճիռ արձակած ըլլար: Հետեւաբար պէտք չէ սխալ տեղեկատուութիւն ներկայացնել հանրութեանը:

Կը յորդորենք յաղթողի եւ պարտուողի անտեղի արտայայտութիւններ չունենալ, յերիւրելով իրավիճակը, պարզանք ներշնչելով, որոնցմէ տուժողը պիտի ըլլայ միայն հայ հաւաքականութիւնը:

Երկխօսութիւն, վստահութիւն եւ սէր կը ցանկանք եւ ոչ թէ կռիւ եւ իրարատեացութիւն:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 14-ին՝ Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Ս. Պատարագի ընթացքում Սրբազան Հայրն անդրադարձավ տոնի խորհրդին, ընտանիքում կնոջ դերի կարեւորությանը, կնոջ առաքելությանը՝ Աստվածամոր կերպարի նմանությամբ:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Տաճարից Հայրապետական թափորն ուղղվեց դեպի Ս. Տրդատի Բաց խորան, ուր հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց Խաղողօրհնեքի արարողությունը: Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի աղոթքի ընթերցումից եւ հոգեզմայլ շարականների երգեցողությունից հետո Նորին Սրբությունն օրհնեց խաղողն ու տարվա բերքը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունը բաշխեց ներկա ժողովրդին, ապա անդրադարձավ Տիրամոր վերափոխման խորհրդին՝ իբրեւ լավագույն վկայություն ծնողասիրության:

Վերջում միաբան սարկավագները օրհնված խաղողի ողկույզները բաժանեցին ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՉՈՐՍ ՍԱՆԵՐ ԱՎԱՐՏԵՑԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐԸ

Հնդկահայոց հոգեւոր հովվության հովանավորությամբ եւ հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն վարդապետ Հով-հաննիսյանի խնամարկությամբ չորս հայ երիտասարդներ, որ սովորում էին Հնդկաստանի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններ-ում, 2011 թվականին ավարտեցին:

Վերջիններս իրենց միջնակարգ կրթությունը ստացել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց մարդասիրական ճեմարանում: Այն հաջողությամբ ավարտելուց հետո նրանք, եկեղեցու հովանավորությամբ, բարձր առաջադիմությամբ ավագ դպրոցի իրենց կրթությունը շարունակել են Կալկաթայում:

Վահե Շիրինյանը (Վաղարշապատ, Հայաստան) ավարտեց Մումբայի «Ծրագրավորում եւ կառավարում» ինստիտուտի ֆինանսներ եւ մարկետինգ ֆակուլտետը, Տաթեւիկ Թ-ադեւոսյանը (Երեւան, Հայաստան) ավարտեց Կալկա-թայի «Լորետո» բարձրագույն ուսումնական հաստատության քաղաքագիտու-թյան ֆակուլտետը, Արթուր Մարուսեւիչը (Վանաձոր, Հայաստան)՝ Էդինբուրգի «Նապիեր» համալսարանի Կալկաթայի մասնաճյուղի հյուրանոցային կառա-վարման ֆակուլտետը, Ջեսիկա Միլնը (Կալկաթա, Հնդկաստան) «Լորետո» բարձրագույն ուսումնական հաստատության մանկավարժության ֆակուլ-տետը:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՕԾՎԵՑ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 20-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի ձեռամբ մասնակցությամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպս. Մնացականյանի եւ Արմավիրի թեմի հոգեւորականների կատարվեց Նոր Կեսարիա համայնքի Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցու օծումը: Նախ Սրբազան հայրերը օծեցին Սուրբ սեղանը, մկրտության ավազանը, ինչպես նաեւ եկեղեցու 12 սյուները:

Սուրբ արարողությանը ներկա էին Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, Արմավիրի մարզի դպահանգը, Արմավիր քաղաքի քաղաքապետը, համայնքապետը եւ բազմաթիվ հյուրեր, թեմի երիտասարդաց միության անդամներ, Նոր Կեսարիայի բնակիչներ:

Արմավիրի թեմի Նոր Կեսարիա համայնքում 2009 թվականից եգիպտաբնակ Բարսեղ Գրզբլյանի բարերարությամբ սկսվել էր Սուրբ Բարսեղ Կեսարացի բազիլիկ եկեղեցու կառուցումը: Բարերարը, լինելով պատմական Կեսարիա գյուղից, 2003թ. գտնվելով Հայաստանում տեղեկացվել էր, որ Արմավիրի տարածաշրջանում մարզկենտրոնից 16 կմ հեռու կա Նոր Կեսարիա անվամբ գյուղ, այստեղ եւ որոշեց կառուցել մի սրբավայր, որը կդառնար համայնքի աղոթատունը:

Օգոստոսի 6-ին Արմավիրի թեմի առաջնորդի ձեռամբ կատարվել էր նորակառույց եկեղեցու զանգերի եւ խաչի օծումը: Օգոստոսի 20-ին եկեղեցու օծման արարողությունից հետո իրենց օրհնության եւ շնորհակալության խոսքերը հղեցին Արմավիրի եւ Եգիպտոսի թեմերի առաջնորդները՝ թե բարերարին եւ թե հավաքված հյուրերին, իրենց սրտի խոսքում շեշտելով որ ուրախ են, որ այսուհետ Հայ Եկեղեցու արարողությունները եւ հարազատ ավանդույթները կդառնան նաեւ այս համայնքի բնակիչների ամենօրյա կյանքի մասը եւ ամենակարեւորը՝ հոգեւոր վերանորոգության շունչ կհաղորդեն բնակիչներին:

Եկեղեցու օծմանը հաջորդեցին մատաղօրհնությունը, ազգային երգն ու երաժշտությունը՝ կազմակերպված համայնքապետարանի կողմից:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

Խաչերի օծում

ԿԱՏԱՐՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ Ս. ԽՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԻ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի հարեւանությամբ կառուցված Ս. Խրեշտակապետաց եկեղեցու խաչերի օծման արարողությունը:

Ս. Խրեշտակապետաց եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2007 թվականի սեպտեմբերի 10-ին: Եկեղեցու բարերարն է Հայաստանի շինարարների միության նախագահ Գագիկ Գալստյանը, եկեղեցու ճարտարապետը՝ Ջիմ Թորոսյանը: Շինարարությունն իրականացնում է «Հորիզոն 95» ՍՊԸ-ն:

Եկեղեցականների թափորն Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից առաջնորդեց դեպի նորակառույց եկեղեցի, ուր եկեղեցու առջեւ դրված խաչերի մոտ սկսվեց օծման արարողությունը: Սաղմոսների ներքո եկեղեցականները ջրով եւ գինով լվացին եկեղեցու խաչերը, ապա սուրբգրային ընթերցումներից եւ աղոթքներից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու գմբեթի խաչը: Մնացյալ չորս խաչերն օծեցին «Ս. Ներսես Մեծ» հիվանդանոցի հոգեւոր տեսուչ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը եւ Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Այնուհետեւ «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողության ներքո Մայր Աթոռի Լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հովնան վարդապետ Հակոբյանը կատարեց խնկարկություն, ապա Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ եկեղեցականները եւ հավատացյալ ժողովուրդը մոտեցան եւ երկրպագելով համբուրեցին նորաօծ խաչերը:

Արարողության ավարտին ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախություն հայտնելով արարողության առիթով՝ Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց. «Ահա այն գեղեցիկ պահն է, երբ խաչերի օրհնությունից հետո հավատավոր զավակները կարող են մոտենալ եւ երկրպագել օծյալ այս խաչերին՝ հաղորդակից դառնալով այն առատ օրհնության, որ ճառագում է խաչերից դեպի ձեզ»: Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Տիրոջ այդ օրհնությամբ լուսավորվեն հավատացյալների հոգիները, եւ այն տարածվի նրանց կյանքից ներս, որպեսզի փառաբանության, աստվածսիրության եւ հայրենասիրության գեղեցիկ զգացումները միշտ ապրեն նրանց հոգիներում եւ սրտերում:

Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց եկեղեցու բարերարին ու ճարտարապետին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայկական ներկապնակ» նկարիչների միջազգային փառատոնի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Սերգո Երիցյանի եւ Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի:

Ողջունելով փառատոնի մասնակիցների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց կարեւոր այս նախաձեռնության կազմակերպիչներին: Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց նման միջոցառումների անցկա-

ցումը, որոնք զորացնում են ժողովուրդների միջեւ մշակութային կապերը՝ այդպիսով նպաստելով եղբայրության եւ համագործակցության առավել ամրապնդմանը: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ միջազգային այս փառատոնը շարունակական կդառնա՝ առիթ ընծայելով արվեստագետների նորանոր շփումների եւ փորձի արդյունավետ փոխանակման:

Հանդիպմանը նաեւ անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում պահվող գեղանկարներին, դրանց համալրման, ընտրության եւ ձեռք բերման սկզբունքներին: Նորին Սրբությունը նկարիչներին տեղեկացրեց նաեւ, որ առաջիկայում Մայր Աթոռում իբրեւ պատկերասրահ կսկսի գործել Խրիմյան թանգարանը, ուր ցուցադրվելու են ինչպես Արշիլ Գորկու նկարները, այնպեսեւ ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործություններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 24-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Բացահայտիր Հայաստանը» եւ «Հայաստան՝ կյանքի երկիր» երիտասարդական խմբերի անդամներին: Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Բելգիայի, Սիրիայի եւ այլ երկրների հայկական համայնքներից Հայրենիք ժամանած երիտասարդները մասնակցում են Հայաստանի տարբեր մարզերում իրականացվող բարեգործական տարբեր ծրագրերին:

Ուրախություն հայտնելով երիտասարդների հետ հանդիպման առիթով՝ Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը երիտասարդ հայորդիներին տարբեր երկրներից համախմբում է Հայաստանում, որպեսզի նրանք ճանաչեն իրենց հայրենիքը, հաղորդ դառնան երկրի եւ դժվարություններին, եւ տեսիլքներին, փորձեն հասկանալ, թե ինչպես եւ որքանով կկարողանան մասնակցել երկրի կառուցմանը եւ առաջընթացին:

Նորին Սրբությունը, դիմելով երիտասարդներին, մասնավորաբար նշեց. «Եկեղեցին է, որ առավել չափով ձեզ համար կբացի մեր ազգային-հոգեւոր արժեքների աշխարհը, որովհետեւ դարեր շարունակ այդ արժեքները, մեր ժողովրդի հոգին, նկարագիրը, մեր ժողովրդի իղձերը, երազներն ու հույսերը կերտվել են Եկեղեցու հարկի ներքո, Եկեղեցու օրհնության եւ առաջնորդության ներքո: Պատահական չէ, որ մեր ազգի զավակներն այդքան կապված են Եկեղեցուն, սիրում են Եկեղեցին, քանի որ Եկեղեցին իրենց ինքնության եւ գոյության երաշխիքն է, եւ պետք է դուք էլ գիտակցեք ու զորավոր կերպով կապվեք, առնչվեք եկեղեցու հետ, ձեր հավատարմությունը պահեք հանդեպ Եկեղեցին եւ ձեր կենդանի աղոթքով շեն ու զորեղ պահեք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ ինքնախաբեություն է այն մտածումը, որ մեկը կարող է լինել լիարժեք հայ, արժանի ժառանգը իր նախնիների՝ հեռու մնալով իր Եկեղեցուց, իր հայրերի հավատքից, իր հոգեւոր արժեքներից եւ իր ազգային-եկեղեցական սովորույթներից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց երիտասարդներին առավել նախանձախնդիր լինել եկեղեցի այցելելու, եկեղեցական կյանքի մեջ ներգրավվելու հարցում եւ եկեղեցական կյանքի միջոցով օգտակարություն ունենալ համայն հայ ժողովրդին:

Նորին Սրբությունը վերստին իր գնահատանքը բերեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, որը միշտ աջակից ու զորակից է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ Հայ Եկեղեցու սրբազան առաքելությանը:

* * *

Նույն օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցության խորհրդարանական պատվիրակության չորս անդամներին՝ Վալերի Բուայեին, Գի Տեսիեին, Ժորժ Կոլոմբիեին եւ Ժակ Ռեմլիեին:

Զրույցի ընթացքում պատվիրակության անդամները Նորին Սրբությանը ներկայացրեցին Հայաստան եւ ԼՂՀ կատարած իրենց այցի տպավորությունները: Անդրադարձ կատարվեց երկու երկրների ու ժողովուրդների միջեւ առկա ջերմ բարեկամական հարաբերություններին:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեության եւ միջեկեղեցական հարաբերությունների, ինչպես նաեւ խորհրդային շրջանից ժառանգած մարտահրավերների եւ հեռեւանքների մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի օգոստոսի 22-25-ը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մայրավանքում գումարվեց Մեծ Եղեռնի զոհերի սրբադասման հարցի շուրջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանձնաժողովի 4-րդ ժողովը:

Առավոտյան ժամը 9^{30}-ին հանձնաժողովի անդամները Անթիլիասի մայրավանքի Ս. Ստեփանոս Նահատակաց մատուռում հոգեհանգստյան արարողություն կատարեցին առավել քան 1.5 միլիոն նահատակների հոգիների խաղաղության համար:

Ժողովն անդրադարձավ նախորդ երեք հանդիպումների արձանագրություններում արծարծված առկախ մնացած հարցերին եւ կատարեց անհրաժեշտ ցուցումներն այդ հարցերի պատասխանների ձեւակերպումներն ամբողջացնելու համար: Ժողովը բանաձեւեց ներքոհիշյալ հարցերի պատասխանները.

1. Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցին ինչպե՞ս էր հռչակում իր սրբերին.
2. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ եղել, որ մեր Եկեղեցին որեւէ անձի սուրբ ճանաչի.
3. Ինչպե՞ս եւ ո՞ւմ միջոցով էր կատարվում սրբադասումը Հայ Եկեղեցում.
4. Ինչո՞ւ Հայ Եկեղեցին վերջին 500 տարիների ընթացքում որեւէ սուրբ չի հռչակել:

Հանձնաժողովի կյանքի կոչվելուց հետո իր աշխատանքների վերաբերյալ մեկ անգամ եւս ընթերցվեցին հայ մամուլի մեջ տեղ գտած հրապարակումներն ու հոդվածները եւ հաստատվեց.

1. Գնահատել հոդվածագիրների նախաձեռնությունն այս հարցի կապակցությամբ.
2. Արձանագրել, որ այդ հրապարակումների մեջ եղած բազմաթիվ մտահոգություններն արդեն իսկ նկատի են առնվել հանձնաժողովի նախորդ երեք ժողովներում եւ դրանց գրավոր արտահայտությունները տեղ են գտել ժողովների արձանագրություններում.
3. Արձանագրել նաեւ, որ այդ հրապարակումներում կան որոշ թյուրիմացություններ եւ թյուրըմբռնումներ, որոնք գալիս են հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկություն ունենալուց, ինչպես նաեւ խնդրո առարկա նյութերի մասին պակասավոր իմացությունից եւ ենթակայական վերաբերմունքից.

4. Օգտակար համարել հետայսու եւս այս հարցի կապակցությամբ արտահայտվող ամեն մի դիտողություն եւ մտահոգություն, որոնք նկատի կառնի եւ կքննարկի հանձնաժողովը:

Հանձնաժողովը հատուկ կարեւորությամբ մեկ ամսամ եւս հաստատեց, որ Մեծ Եղեռնի զոհերի սրբադասման հարցը բնավ քաղաքական ասպառ չունի եւ չպետք է ունենա: Հայ Եկեղեցին ինչպես անցյալում, այնպես էլ 20-րդ դարասկզբին ունեցել է Քրիստոսի անվան համար իրենց կյանքը նվիրաբերած նահատակներ, որոնց սրբադասման հնարավորությունը կազմում է այս հանձնաժողովի քննարկումների առանցքը:

Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետն ընդունեց հանձնաժողովի անդամներին եւ իր օրհնություններն ու բարեմաղթանքները բաշխեց նրանց՝ մաղթելով արդյունավետ աշխատանք:

Հանձնաժողովի առաջիկա աշխատանքային հանդիպումը տեղի կունենա 2011թ. դեկտեմբերի 5-10-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

25 օգոստոս 2011 թ.:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ
ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՎՍՏՐԻԱՅԻ ԻՆՍԲՐՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Օգոստոսի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի Ինսբրուկ քաղաքի հոգեւոր առաջնորդ Մանֆրեդ եպիսկոպոս Շոյերի գլխավորած ուխտավորների խմբին: Խմբի կազմում էին ուխտավորներ Ավստրիայի տարբեր համայնքներից, ինչպես նաեւ Ինսբրուկ քաղաքի «Տիրոլեր Սոնենթագ» եկեղեցական օրաթերթի ընթերցողների խումբը:

Հանուն ուխտավորների Մանֆրեդ եպիսկոպոսը երախտագիտություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայության հոգեւոր կենտրոն այցելության եւ ջերմ ընդունելության, հայկական հարուստ քրիստոնեական մշակույթին եւ պատմությանը ծանոթանալու հնարավորության համար:

Այնուհետեւ ուխտավորների խմբին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Եկեղեցու եւ քրիստոնեական հավատի կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում: «Մեր հավատքի զորության շնորհիվ պատմության ընթացքում կարողացել ենք բազմաթիվ դժվարություններ ու խոչընդոտներ հաղթահարել: Մենք ցեղասպանությունը վերապրեցինք, որովհետեւ Քրիստոսի Հարության հավատն ունեինք մեր մեջ: Ցեղասպանությունից հետո էլ, երբ հաստատվեց անաստվածության գաղափարախոսությունը, շնորհիվ մեր հավատքի, մեր սրբազան հայրերի հանդեպ ունեցած նվիրումի, նաեւ այդ շրջանը կարողացանք հաղթահարել ու ապրել», - իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը՝ անդրադառնալով նաեւ ներկայիս հոգեւոր վերազարթոնքին ու Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին ներկայացրեց վերջին տարիներին Հայ Եկեղեցու կյանքից ներս արձանագրված ձեռքբերումները՝ ժողովրդի քրիստոնեական դաստիարակությանն ուղղված ծրագրերը, նոր եկեղեցականների պատրաստությունը, զանազան ընկերային ծրագրերը, հարյուրից ավելի պատմական վանքերի ու տաճարների վերանորոգումն ու նոր եկեղեցիների կառուցումը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈԼԻԿ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Օգոստոսի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կաթոլիկ Եկեղեցու Ավստրիայի Գրաց Սեկուա եւ Գուրկի թեմերից Հայաստան ժամանած 37 ուխտավորների՝ առաջնորդությամբ Բաղ Սուգեի հոգեւոր հովիվ Հայր Էդմունդ Մուհրերի: Խմբի Հայաստան այցելության նպատակը հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային արժեքներին հաղորդակից դառնալն է:

Ողջունելով ուխտավորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց խմբի անդամներին: Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձավ Ավստրիայում իր ուսումնառության տարիներին եւ հիշողություններին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց նաեւ ուխտավորներին հետաքրքրող հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսական եւ էկումենիկ կյանքին:

Հանդիպմանը ներկա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը կաթոլիկ ուխտավորներին հանգամանորեն ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հարաբերությունները Քույր եկեղեցիների, մասնավորապես Կաթոլիկ Եկեղեցու հետ, տեղեկացրեց երկու եկեղեցիների միջեւ առկա համագործակցության մասին սոցիալական ոլորտում:

Հանդիպումից հետո ուխտավորները Մայր Տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ ԱԳՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԵՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Օգոստոսի 31-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ արտաքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի եւ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների խորհրդակցության մասնակիցներին՝ առաջնորդությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի: Հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ ԱԳՆ նախարարի տեղակալները եւ նախարարության ստորաբաժանումների ղեկավարները:

Հանդիպմանը ՀՀ ԱԳՆ նախարարը շուրջ հիսուն դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների եւ գլխավոր հյուպատոսների անունից շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար՝ վերհաստատելով ամենքի սերն ու հարգանքը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին եւ հայցելով Ամենայն Հայոց Հայրապետի պատգամը:

Այնուհետեւ խորհրդակցության մասնակիցներին իր օրհնություններն ու բարեմաղթանքները բերեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը: Ողջունելով դիվանագետների այցը ամենայն Հայոց հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հանդիպման գեղեցիկ նախաձեռնության առիթով:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում անդրադարձավ դիվանագետների կարեւոր ծա-

ությանը, որը ուղղված է Հայրենիքի եւ հայ ժողովրդի շահերի պաշտպանությանը տարբեր երկրներում, ինչպես նաեւ ազգապահպանության խնդիրների լուծմանը: Նորին Սրբությունը հաստատեց, որ հովվապետական այցերի ընթացքում տեսել է ՀՀ դիվանագետների կատարած աշխատանքը, ինչը միմիայն ուրախություն է պատճառում, որ հայրենի երկիրը մշտապես աշխարհասփյուռ իր զավակների կողքին է, քաջալերում եւ զորակցում է նրանց:

Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ այս անկախ պետականությունն է, որ պիտի երաշխավորի հայ ժողովրդի հարամնա ընթացքը դեպի նոր հազարամյակներ, ինչը մեծապես պայմանավորված է նաեւ դիվանագիտական ներկայացուցչությունների ծառայությամբ:

Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀՀ ԱԳ նախարարին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելությանը ցուցաբերվող աջակցության համար, ինչպես նաեւ իր օրհնությունը բերեց ՀՀ դեսպաններին՝ տարբեր երկրների համայնքներից ներս հոգեւոր սպասավորների հետ հաստատած համագործակցության համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց համատեղ ջանքեր ներդնել ի զորացումն ազգային կյանքի եւ ի պահպանություն ազգային ինքնության: Հայցելով Երկնավոր Տիրոջ օրհնությունը եւ Սուրբ Հոգու առաջնորդությունը դիվանագետներին՝ Նորին Սրբությունը մաղթեց շարունակել իրենց օգտավետ ծառայությունը՝ շահեկան Հայրենիքի եւ համայն հայ ժողովրդի համար:

Վերջում տիար Էդվարդ Նալբանդյանը դիվանագետների անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհավորեց ծննդյան 60-ամյակի կապակցությամբ եւ այս առիթով Նորին Սրբությանը փոխանցեց ՀՀ ԱԳՆ հուշամեդալ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԻԱԾՆԱԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Օգոստոսի 31-ին՝ Գիտելիքի եւ դպրության օրվա նախօրեին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց կրթության մշակների օրհնության մասնավոր կարգ:

Ավանդույթ դարձած այս արարողությանը ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ներկայացուցիչներ Աժ կրթության մշտական հանձնախմբից, ԿԳՆ աշխատակիցներ, ՀՀ մարզպետարանների կրթության վարչության պետեր, ՀՀ պետական եւ մասնավոր բուհերի ռեկտորներ, ՀՀ քոլեջների եւ ուսումնարանների տնօրեններ, ՀՀ մարզերի եւ Երեւանի դպրոցների ու մանկապարտեզների տնօրեններ, ինչպես նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան դպրանոցի եւ Էօրնեկյան հանրակրթական դպրոցի տեսչության անդամներ:

Օրհնության արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց ԿԳ նախարարին, կրթության գործի նվիրյալներին եւ մանկավարժներին.

«Մեծ ուրախություն է Հայրապետիս համար վերստին ընդունել Ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գովելի է, որ դուք ուսումնական տարին սկսում եք այցելելով Սուրբ Էջմիածին՝ ձեր աղոթքը առ Աստված բարձրացնելու մեր նվիրական հոգեւոր կենտրոնում, որպեսզի Տերն օրհնի եւ առաջնորդի ձեր առաքելությունը մեր ժողովրդի եւ մեր Հայրենիքի կյանքում:

Մշակների օրհնության արարողությունից

Մեծ եւ պատվական է ձեր կոչումն ու ծառայությունը, ձեզ է վստահված նոր սերնդի կրթությունը, ձեր ձեռքերում է մեր ժողովրդի գալիքը, որը բոլորս ուզում ենք տեսնել լուսավոր ու պայծառ: Դուք գիտելիքներով հարստացնում եք մեր զավակներին, կրթում նաեւ նրանց հոգին ազգային արժեքներով, բարոյական սկզբունքներով՝ ազնվությամբ, արդարությամբ, մարդասիրությամբ, հայրենասիրությամբ եւ ամենայն առաքինությամբ, առանց որոնց չի կարող կանգուն մնալ ոչ մի հասարակություն, ոչ մի պետություն, նույնիսկ ընտանիք, առանց որոնց կեղծ են եւ քանդվում են անգամ մարդկային հարաբերությունները: Բարոյական այդ արժեքները, սակայն, կկորցնեն իրենց ճշմարիտ բովանդակությունը առանց հավատի Աստծո հանդեպ: Հավատի միջոցով Աստծո հետ ունեցած կենդանի հաղորդությամբ է զորություն գտնում մարդկային հոգին, պահպանում պատկերն ու նմանությունն իր Արարչի, որ ճշմարիտ ակունքն է ամենայն բարու եւ բարիքի:

Սիրելինե՛ր, մխիթարությամբ ու քաջալերությամբ է լեցուն Մեր հոգին, քանզի այսօր, մեր անկախ պետականության պայմաններում առատորեն սերմանվում են քրիստոնեական քարոզչության եւ դաստիարակության հունդերը, որոնք նաեւ ձեր միջոցով բազմապատիկ բարի արդյունավորում են ունենալու մեր մատաղ սերնդի հոգում, ինչպես մեր Տերն է ասում՝ մեկին երեսուն, վաթսուն, հարյուր: Այս մեծ հույսով եւ տեսիլքով տարիներ առաջ քայլեր ձեռնարկվեցին կրթօջախներում Հայ Եկեղեցու պատմությունը դասավանդելու համար, որովհետեւ եթե իբրեւ ժողովուրդ քրիստոնյա գիտենք մեզ, ապա պետք է ճանաչենք մեր Սուրբ Եկեղեցին, նրա կոչումն ու առաքելությունը, որը առաջնորդում է մեզ դեպի աստվածճանաչողություն, ուսուցանում է Տիրոջ Խոսքը, Աստծու պատգամներն ու պատվիրանները եւ մեր հոգին դարձնում բնակարան Նրա սուրբ ներկայության:

Մենք բարձրորեն գնահատում ենք մեր պետության նախանձախնդրությունը Հայ Եկեղեցու հանդեպ, որպեսզի հավատը եւ քրիստոնեական ճանաչողությունը կրթվեն ու զորանան մեր մանուկների հոգում: Հավատում ենք, կրթական գործի սիրելի՛ մշակներ, ձեր ջանք ու նվիրումին, որ ներդնում եք հանուն մեր զավակների կրթության: Ամուր, անսասան հավատքով մեր եւ մեր զավակների պիտի կյանքի կոչվեն մեր ժողովրդի հույսերը եւ լուսավորվեն մեր գալիքի հեռասպանները: Առ Աստված հայցով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ, մեծահարգ Նախարար եւ սիրելի մշակներ կրթական հաստատությունների, մաղթում ենք, որ Տերը շնորհազարդի ձեզ Սուրբ Հոգու շնորհներով, զորացնի հավատքի մեջ, որպեսզի ձեր անխոնջ ջանքերի արդյունքները բազում արգասիքներով ուրախացնեն ձեզ եւ բարիք բերեն մեր ժողովրդին, մեր Հայրենիքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: Թող Աստված օրհնի ձեր կյանքը եւ ձեր առաքելությունը:

Եւ թող Տերը խաղաղ պահի մեր երկիրը, շեն ու բարօր, հավատքով զորեղ՝ մեր ժողովրդին եւ միշտ պայծառ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին այսօր եւ հավիտյանս. ամեն»:

Վերջում Հին ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը վերստին իր օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց կրթության ոլորտի սպասավորներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վիրահայոց թեմի առաջնորդարանում, ,Գալուստ Գյուլբենկյանե հիմնադրամի հովանավորությամբ, անցկացվեց Վրաստանի հայ նկարիչների միության կազմավորման հիմնադիր ժողով, որին մասնակից դարձան Թբիլիսիից եւ Սամցխե-Ջավախքից ժամանած գեղանկարիչներ, մանրանկարիչներ, քանդակագործներ, արվեստի այս ճյուղը ներկայացնող այլ գործիչներ: Ժողովը բացվեց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնության խոսքով: Սրբազանը մասնավորապես նշեց. «...Թեեւ վերջին յոթ տարիների ընթացքում Վրաստանում գործող հայ նկարիչները եկեղեցու առաջնորդությամբ բազմաթիվ ցուցահանդեսներ են կազմակերպել ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ Հայաստանում, Կանադայում եւ այլ երկրներում, միասնաբար կյանքի են կոչել մշակութային բազմաթիվ միջոցառումներ, այդուհանդերձ անհրաժեշտություն է նկատվում նորահաստատ «Հայարտուն» կենտրոնի հովանու ներքո հիմնել «Վրաստանում ստեղծագործող հայ նկարիչների միություն»: Վազգեն եպիսկոպոսը հայտնեց նաեւ, որ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի աջակցությամբ կենտրոնում կստեղծվեն միության արդյունավետ գործունեությանը նպաստող անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ընթացս ժողովի, մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես եկավ գործնական առաջարկով: Իր խոսքում ԽՍՀՄ նկարիչների միության եւ Վրաստանի նկարիչների միության անդամ, արվեստագետ Լեւոն Օսիպովը նշեց. «Կարծում եմ սա հրաշալի նախաձեռնություն է եւ հուսով եմ Միությունը, որի ստեղծման առիթը համախմբել է այսօր բոլորիս, կարդարացնի իր առջեւ դրված պահանջներն ու նպատակը»:

Ժողովն ընթացավ բավականին գործնական մթնոլորտում: Ավարտին, ներկաների միաձայն քվեարկությամբ հիմնադրվեց «Վրաստանի հայ նկարիչների միությունը»՝ համապատասխան միավորումներով: Միության նախագահ ընտրվեց ճանաչված եւ բազմավաստակ մանրանկարիչ Մերուժան Շահումյանը, մայրաքաղաք Թբիլիսիի պատասխանատու՝ Իռենա Օհանջանովան, Ախալքալակի շրջանի պատասխանատու՝ Կառլեն Կարապետյանը, Նինոծմինդայում՝ Համլետ Արոյանը, իսկ Ախալցիխեում՝ Ալեքսանդր Իգիթխանյանը:

Համաժողովի մասնակիցների միաձայն որոշմամբ ընտրվեց նաեւ նկարիչների միության գեղարվեստական խորհրդի նախագահ, որի պարտականությունները ստանձնեց Լեւոն Օսիպովը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՀԱՅԱԶԱՏ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻԿՅԱՆԸ

Օգոստոսի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Հայազատ քահանա Մարտիկյանը (Ռումինիայի հայոց թեմ)՝ իր դիմումի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Գրիգոր Մարտիկյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ